

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011Թ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ
ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ընդհանուր տեղեկություններ մարզի մասին

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ արևելքում, սահմանակից է Արարատի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերին, հարավ արևմուտքից Նախիջևանի ինքնավար հարապետությանը, ընդգրկում է Արփա գետի ավազանը, ունի լեռնային մակերևույթ: Մարզը զբաղեցնում է 2306 քառ.կմ տարածք, ունի 44 համայնք՝ 3 քաղաքային /Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ/ և 41 գյուղական, մարզկենտրոնն է Եղեգնաձոր քաղաքը:

Մարզի ցածրադիր գոտում /մինչև 1400 մ. բարձրությունը/ կլիման չոր է, օրական ջերմաստիճանների մեծ տատանումներով, մինչև 400 մմ. տեղումներով: Բարձրադիր գոտիներին՝ 1400-2800մ. բարձրությունները, բնորոշ են լեռնատափաստանային և լեռնաանտառային լանդշաֆտները:

Մարզն աչքի է ընկնում պատմա-ճարտարապետական և մշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով՝ եկեղեցիներով, վանքերով, խաչքարերով, հնագիտական բազմապիսի արժեքներով: Մարզի բնության գեղատեսիլ վայրերում տեղակայված են առողջարաններ, հյուրանոցներ և հանգստյան տներ: Մարզի տարածքը հարուստ է կրաքարերի, բազալտի, գրանիտի, ֆելզիտի, մարմարի, ապակու հումքի /կվարցային ավազ/ մեծ պաշարներով, ունի կադրային մեծ ներուժ՝ նշված հումքային բազայի վրա արտադրություն կազմակերպելու համար:

Գյուղատնտեսություն և բնապահպանություն

2011 թ. չնայած վաղ գարնանային անբարենպաստ բնակլիմայական պայմաններին կազմակերպված սկսվեց գարնան դաշտային աշխատանքները: Մշակաբույսերի սնուցման համար գյուղացիական տնտեսություններին տրվեց 120 տոննա ազոտական պարարտանյութ 60 լիտր ազոտովիտ 1 կենսապարարտանյութ:

Սեմարտադրության զարգացման ծրագրով մարզին տրվել է 64 տոննա գարու / որից 40 տոննա էլիտա , 20 տոննա առաջին վերարտադրության/ , մեկ տոննա եգիպտացորենի և 55 տոննա առաջին վերարտադրության սերմացուներ:

Բույսերի պաշտպանության ծրագրով պետբյուջեի միջոցների հաշվին 33 գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին տրվել է 175 կգ ,, ցինկի ֆոսֆիդ ,, մկնասպան թունանյութ , որի միջոցով 1400 հա գյուղատնտեսական նշանակության տարբեր հողատեսքերի վրա 12 համայնքներում / Խաչիկ , Չիվա , Ռինդ , Արին , Ազատեկ , Ջեղեա , Գետափ , Աղավնաձոր , Արենի , Եղեգնաձոր , Բարձրունի , Սարավան / իրականացվեց մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ :

Մարզի համայնքներում անասունների նկատմամբ կատարվել են պետական պատվերով նախատեսված բոլոր անասնաբուժական բուժաբուժֆիլակտիկ միջոցառումները: Այսօրվա դրությամբ մարզի անասնազվխաքանակը ապահով է ինֆեկցիոն և ինվազիոն հիվանդությունների նկատմամբ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայության մասնագետների հետ համատեղ մշտական ուսումնասիրություն է կատարվել բույսերի կարանտին և ոչկարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման ուղղությամբ:

Համակարգվել է ջրամատակարար և ջրօգտագործողների ընկերությունների աշխատանքները, որոնց միջոցով ժամանակին վերանորոգվեցին ջրահան կայանները, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերը: Ըստ ՋՕԸ-ի կազմած պլան-ժամանակացույցի կազմակերպվել է ոռոգման շխատանքները: Ոռոգման սեզոնի ընթացքում ջրօգտագործողներին է տրվել 7030 հազ. խմ ոռոգման ջուր, որի հասույթը կազմել է 77330.0 հազ. դրամ, գանձվել է 83892.2 հազ. դրամ, որը կազմում է հասույթի 108.5 % - ը: Մարզպետարանը աջակցություն է ցուցաբերել Վայքի և Եղեգնաձորի ՋՕԸ -ին ոռոգման սեզոնի ընթացքում ոռոգման ջրի մատակարարման, առաջացած վթարների վերականգնման և վարձավճարների գանձման աշխատանքներին: Պետբյուջեի միջոցների հաշվին 57.0 մլն դրամ է հատկացվել «Եղեգնաձոր» և «Վայք» ՋՕԸ – ին ոռոգման աշխատանքները կազմակերպելու համար:

Շատին համայնքի գյուղմիջյան փլուզված հատվածում Հերմոն - Ելփին ջրատարի ժամանակավոր պաշտպանության հակահեղեղային աշխատանքների և Հոստունի տեղամասում վթարային հակահեղեղային աշխատանքների համար հատկացվել է 29.4 մլն դրամ:

«Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում մարզի Եղեգնաձոր, Գլաձոր, Վերնաշեն, Աղավանաձոր, Ռինդ և Խաչիկ համայնքներում վերանորոգվել է 19.2 կմ 3-րդ կարգի ջրանցքներ 386.6 մլն դրամ նախահաշվալին արժեքով: Ուսումնասիրվել է »Եղեգիս«, »Արփա« գետերի առավել սելավավտանգ հատվածները և ափապաշտպան կառույցներ ստեղծելու նպատակով ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն 2012 թ. հակահեղեղային միջոցառումների իրականացման ծրագրում ընդգրկելու համար:

Ճապոնական դրամաշնորհով մարզին հատկացվել է երեք միավոր «ՄՏՁ- 82» անիվավոր տրակտոր, որից մեկակն տրվել է Ջառիթափի, Ելփինի կոոպերատիվներին և մեկ հատ Շատինի համայնքին:

Գյուղատնտեսական մթերքների արտադրությունը

հհ	Գյուղատնտեսական մթերքների անվանումը	չափի միավորը	2010 թ.	2011թ.	+ -
1	Հացահատիկ	տոննա	4151	6303	
2	Կարտոֆիլ	*	2956	3092	
3	Բանջար	*	6450	6668	

4	Բոստան	*	268	303	
5	Պտուղ	*	2617	3337	
6	Խաղող	*	3808	4210	
7	Խոտ	*	23630	23630	
8	Կաթ	*	18500		
9	Միս	*	5400		
10	Ձու	մլն.հատ	15.4		

Անասնազլխաքանակը

հհ	Անասունների տեսակը	չափի միավորը	2010 թ.		+ -
1	Խոշոր եղջ.անասուններ	գլուխ	16182		
2	որից կովեր	*	7833		
3	Սանր եղջ.անասուններ	*	17059		
4	Խոզեր	*	1745		
5	Թռչուններ	*	52059		

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսության փոխօգնության բանկի միջոցով տրվել է շուրջ 510 մլն դրամ գյուղատնտեսական վարկ , որը նախորդ տարվա նկատմամբ / 445 մլն / ավել է 14.6 %- ով , այդ թվում գյուղատնտեսական սուբսիդավորվող վարկ է տրվել 337 մլն դրամ: Համախառն արտադրանքը 2011 թ. կազմել է ,, ,, ,, ,, մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ պակասել է % - ով , որը հետևանք է կորիզապտղի վաղ գարանանային ցրտահարության :

Բնապահպանություն

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել է մարզի տարածքում բնապահպանական խնդիրները և կազմվել են համապատասխան ծրագրեր ու առաջարկություններ խնդիրների լուծման և շրջակա միջավայրն աղտոտումից զերծ պահելու ուղղությամբ:

Հիմնովին կարգի են բերվել Վայք և Եղեգնաձոր քաղաքների աղբավայրերը: Եղեգնաձոր քաղաքում համայնքների զարգացման երրորդ փուլի ծրագրի շրջանակներում 2010-2011թթ. ձեռք է բերվել 60 աղբաման, իսկ համաֆինանսավորման հաշվին պատրաստվել և տեղադրվել է 50 աղբարկղ: Կանոնակարգված աղբաթափություն իրականացնելու նպատակով Եղեգնաձոր քաղաքի աղբավայրի մուտքը ցանկապատվել և տեղադրվել է դարպաս: Ընդունվել է աշխատակից, որի միջոցով իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, ինչպես նաև աղբանոցի մաքրված տարածքներում

մարզպետարանի աշխատակիցների կողմից տնկված մոտ 300 տնկիների անհրաժեշտ խնամքի աշխատանքները: Ջերմուկ և Վայք քաղաքներում սեփական միջոցների հաշվին տեղադրվել է՝ Ջերմուկում 35 աղբաման և 60 աղբարկղ, իսկ Վայքում համապատասխանաբար 25 աղբաման, 40 աղբարկղ: Այս պահին մարզի գյուղական համայնքներում չհսկվող և չարտոնագրված աղբակույտեր գործնականում գոյություն չունեն: Տարվա ընթացքում համակարգվել է մարզի տարածքում գործող անտառտնտեսությունում տարվող աշխատանքները՝ անտառների էկոլոգիական, սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային պահպանության կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները: Մարզի տարածքում գործող անտառ տնտեսության հաշվեկշռում գտնվող 15065 հա հողատարածքներից անտառածածկ է 7656 հա: Անտառի շարք է փոխադրվել շուրջ 8 հա տնկարք /տոճենի/:

Ստեղծված հանձնաժողովի միջոցով ուսումնասիրվել է մարզի տարածքում ջրերի և ընդերքի օգտագործման ու պահպանության վերաբերյալ բնապահպանական օրենսդրության պահանջների կիրառման ընթացքը :

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության և մարզպետարանի կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է հողի բերրի շերտի տեղափոխման կարգի խախտման 2, ապօրինի ծառահատման 4, որսագողության և ձկնագողության 7 դեպքեր : Բնությանը հասցված վնասը վերականգնված է:

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացման, ինչպես նաև իրավախախտումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների արդյունքում նախորդ տարվա համեմատությամբ իրավախախտումները նվազել են 28%-ով: Հաշվետու ժամանակաշրջանում ապօրինի ընդերք օգտագործման դեպքեր չեն արձանագրվել: Մարզի տարածքում գործում են.

- հանքային ջրերի 4 հանքավայր
- քարի արդյունահանման 12 հանքավայր
- քարի վերամշակման 8 արտադրամաս

Հողաշինություն և հողօգտագործում

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 191937.4 հա, այդ թվում վարելահող՝ 16210.0 հա, բազմամյա տնկարքեր՝ 1361.6 հա, խոտհարքեր՝ 5006.7 հա, արոտ՝ 93999.5 հա, այլ հողատեսքեր 75359.5 հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 27 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու առաջարկություններ, որից՝ 23-ը ՀՀ Կառավարության կողմից հաստատվել են: Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն «Հողշինմոնիթորինգ» / ՊՈԱԿ-ի մասնագետների և 17 համայնքի ղեկավարների հետ աշխատանքներ ենք իրականացրել համայնքների վարչական սահմանների սահմանանիշերի ամրացման և երեք/ Ջառիթափ, Չիվա, Գոմք/ համայնքների կադաստրային քարտեզների թարմացման գործընթացին:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի՝ համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 12 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները: Օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, ստեղծվել են աճուրդային հանձնաժողովներ, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 77.025 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 60874651.0 դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Ստորև ներկայացվում է 2011թ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության տալու վերաբերյալ տվյալներ

Տարի	Վարձակալվող հողատարածքը հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ դրամ	Գանձվել է հազ.դրամ	Տոկոսը
2010	4881.4	1268	38896.8	36865.0	94.8
2011	5884.0	1278	39808.4	61552.8	154.6

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- անվտանգության նկատառումներով չեն մշակվում սահմանամերձ գոտու վարելահողեր՝ 750 հա,
- վարելահողերի 78 % -ը անջրդի են,
- հողերի բնական ցածր բերրիություն,
- բնակավայրերից հեռու գտնվելը:

Արդյունաբերություն

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են 22.5% և 60.0%, որոնք թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 43.8%-ը: Մարզի խոշոր և միջին կազմակերպություններին, որոնք կազմել են ընդհանուր թվաքանակում 12.5%, բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 52.9%-ը:

Մարզում 2011թ-ի ընթացքում արդյունաբերական արտադրանք թողարկվել է 74231,5 մլն դրամի (ընթացիկ գներով) արտադրանք, որը կազմել է Հանրապետությունում արտադրված արտադրանքի 0.9 %-ը: 2010թ-ի ընթացքում արդյունաբերական արտադրանք թողարկվել է 66314 մլն դրամի (ընթացիկ գներով) արտադրանք: 2011թ-ին արդյունաբերական

արտադրանքը նախորդ տարվա նույն ժամանակի համեմատությամբ աճել է 11.8%-ով:

Մարզի արդյունաբերական արտադրանքի գերակշռող մասը բաժին է ընկնում գինեգործությանը և հանքային ջրերի արտադրությանը: 2011թ. արտադրանքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ համապատասխանաբար գինեգործությունը աճել է 14.1%-ով, հանքային ջրերի արտադրությանը աճել է 17.3%-ով:

Մշակվել է մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների փաթեթ, մասնավորապես՝ գյուղ. մթերքների վերամշակման, զբոսաշրջության, տեղական հումքերի / կվարցային ավազ, ֆելզիտ, բազալտ / վրա նոր արտադրությունների հիմնման, փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման, այլընտրանքային / արեգակնային, քանու / էներգետիկայի զարգացման:

2011 թվականին մարզում մեծ առաջընդաց է գրանցվել էլ. էներգիայի արտադրության ոլորտում, սկսվել է 19 ՀԷԿ-երի շինարարությունը՝ ներդրվել մոտավորապես 2 մլդ. Դրամ գումար: Սկսվել է հողմաէլեկտրակայանի նախագծային աշխատանքները:

Մարզի զարգացման հեռանկարային ոլորտներից է զբոսաշրջությունը, որը մշական ուշադրության կենտրոնում է, մասնավորապես Ջերմուկ քաղաքում կառուցվում է հյուրանոցային համալիր /ներդրվել է մոտավորապես 3 մլն Ամն դոլար գումար/: Սկսվել է Պասկևիչի կամրջի վերանորոգման նախագծային աշխատանքները:

Մարզի զարգացման հեռանկարային ոլորտներից է նաև հանքարդյունահանումը, մարզպետարանի աջակցությամբ <Գեոթիմ> ՍՊԸ-ին տրամադրվել է 147 հա հողատարածք ընդերքի հետախուզման համար /ներդրվել է մոտավորապես 800 000 Ամն դոլար գումար/:

Մարզպետարանի օժանդակությամբ մշակվել և ՀՀ կառավարություն, առևտրային բանկեր են ներկայացվել բազմաթիվ ներդրումային ծրագրեր, որոնց մեծ մասը ֆինանսավորվել է, մասնավորապես ՀՀ կառավարություն հավանությանն են արժանացել <Մեգա Արարատ> ՍՊ, <Գոլդեն Գոութ> ՍՊ և <Վայք գրուպ> ՓԲ ընկերությունների ծրագրերը որոնցից երկուսը արդեն ֆինանսավորվել են: Մարզի գործարարների կազմակերպվում են համաժողովներ և ամեն տարի ավանդաբար /հոկտեմբեր ասին / կազմակերպվում է գյուղ մթերքների, արդյունաբերական արտադրանքի ցուցահանդես, ինչպես նաև գինու տոն:

Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցում է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ: Մարզի ձեռնարկություններից՝

<Ջերմուկ գրուպ> ՓԲԸ, <Ջերմուկի մայր գործարան> ՓԲԸ, <Մեգա Արարատ> ՍՊԸ, <Գոլդեն Գոութ> ՍՊԸ, <Գետնատուն> ՍՊԸ, <Արենի> ՓԲԸ, <Արենի գյուղի> ՍՊԸ պարբերաբար մասնակցում են <ԱրմՊրոդէքսպո>, ՌԴ, Գերմանիա, ԱՄՆ և այլ երկրներում կազմակերպվող ցուցահանդեսների և մրցանակային տեղեր են զբաղեցնում:

2011թ. բազմակողմանի համագործակցության պայմանագրեր ենք կնքել ՌԴ-ի Նիժնի Նովգորոդի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Խոյի նահանգի ղեկարության հետ, որի արդյունքում առաջիկայում կվարցիտների հանքավայրը և Եղեգնաձորի պահածոների գործարանը:

Մարզում գործում են շուրջ 12 տնտեսվարող սուբյեկտների և օտարերկրյա ներդրողների համատեղ ձեռնարկումներ որոց ցուցաբերվում է բազմակողմանի աջակցություն, օտարերկրյա ներդրողներին / հատկապես մարզի նախկին բնակիչներին / խրախուսում ենք ներդրումներ կատարել մարզում:

Սակայն մարզի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝

-Մարզի տնտեսության զարգացման համար դեռևս բավարար չեն կատարված ներդրումների ծավալները: Հրատապ խնդիր է մարզի միակ՝ Եղեգնաձորի պահածոների գործարանի վերագործարկումը:

-Մարզում դեռևս լիարժեքորեն չի գործում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության համակարգը, այն դեռևս չի հասնում մարզի բոլոր համայնքներին, ինչը իր հերթին չի նպաստում մարզի համայնքների համամասնական զարգացմանը: Խնդրի լուծմանը կարող է նպաստել երկարաժամկետ մատչելի վարկային միջոցներ ներգրավումը, ինչպես նաև գրավախնդիրների լուծումը:

-Արդյունաբերության ոլորտում դեռևս չի ձևավորվել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմը, ցածր է մնում արտադրության արդյունավետության և տնտեսական ներուժի օգտագործման մակարդակը:

Արտաքին հարաբերություններ

Մարզում գործարարության աշխուժացման նպատակով մարզպետարանը ակտիվ արտաքին հարաբերություններ է վարում օտարերկրյա պետությունների տարածքային միավորների և միջազգային կազմակերպությունների հետ:

2009թ. հոկտեմբերի 14-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել ՌԻկրահինայի Խարկովի մարզի և Վայոց ձորի մարզի միջև:

Հուշագիրը հնարավորություն է ընձեռնում համագործակցելու՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի, տրանսպորտի, կրթության, գիտության, տեխնիկայի, առողջապահության, զբոսաշրջության, սպորտի, երիտասարդության, մշակույթի, արվեստի, շրջակա միջավայրի, բնական պաշարների օգտագործման և տեղական ինքնակառավարման բնագավառներում:

Նախառեսվում է 2012 թ այցելություն Խարկովի մարզ:

2010թ. փետրվարի 27-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել ՀՀ Վայոց ձորի մարզի և Իտալիայի Տրեվիզո նահանգի միջև:

Առաքելությունը կազմակերպվել է “Տրեվիզոն Հայաստանի համար” մարզային նախաձեռնության շրջանակներում

Հուշագիրը հաստատում է՝ գյուղատնտեսական արտադրության, խաղողագործության, գինեգործության, զբոսաշրջության, շրջակա միջավայրի, տեխնիկական կարողությունների զարգացման, մշակույթի և տեղական ինքնակառավարման ոլորտներում՝ համագործակցություն:

2011թ օգոստոսի 20-30-ը ՀՀ Վայոց ձորի մարզպետը այցելեց Իտալիա եղավ Տրեվիզո նահանգում, ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ համագործակցությունը ակտիվացնելու ուղղությամբ:

2010թ. դեկտեմբերի 5-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալության և ՀՀ Վայոց ձորի մարզի միջև:

Հուշագիրը հնարավորություն է ընձեռնում համագործակցելու՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի, կրթության, գիտության, զբոսաշրջության, սպորտի, երիտասարդության, շրջակա միջավայրի և բնական պաշարների օգտագործման բնագավառներում:

Տեղի են ունեցել մի շարք փոխադարձ այցելություններ, սպորտային միջոցառումներ 2011 թ նոյեմբերի 22-25-ը մարզպետի գլխավորած պատվիրակությունը եղավ ԻԻՀ Խոյի կուսակալությունում, ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ համագործակցությունը ընդլայնելու նպատակով:

2011թ. ապրիլի 19-ին համագործակցության համաձայնագիր է ստորագրվել ՀՀ Վայոց Ձորի և ՌԴ Նիժեգորոդի մարզերի միջև:

Բազմակողմ համագործակցության համաձայնագիրը հնարավորություն է ընձեռնում համագործակցելու՝ արդյունաբերության, գյուղատնտեսության,

առևտրի, տրանսպորտի կրթության, գիտության, տեխնիկայի, առողջապահության, զբոսաշրջության, սպորտի, երիտասարդության, մշակույթի, արվեստի, շրջակա միջավայրի, բնական պաշարների օգտագործման և տեղական ինքնակառավարման բնագավառներում:

Մշակվել է 2012-2013թթ համատեղ գործողությունների ծրագիր:

2011թ. ապրիլին կայացած ՀՀ- և ՌԴ առաջին միջնարգային համագործակցության համաժողովի շրջանակներում առաջարկվել է համագործակցության սկսել ՌԴ Արխանգելսկիի և ՀՀ Վայոց ձորի մարզերի միջև:

Սկսել ենք համագործակցության համաձայնագրի համաձայնեցման գործընթացը:

Քաղաքաշինություն

Կազմել և համապատասխան նախարարություններ ենք ներկայացրել քաղաքաշինության բնագավառում 2012-2014 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը և 2012 թվականին նախատեսվող օբյեկտների հիմնանորոգման բյուջետային հայտերը՝ ըստ կոնկրետ բնագավառների:

- Քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված են մարզի և դրանում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, մշակութային, առողջապահական, մարզական օբյեկտների շինարարության և հիմնանորոգման ինչպես նաև բնակֆոնդի հիմնանորոգման, քաղաքաշինական այլ խնդիրների և ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծության հետ :
- Աշխատանքներ են իրականացվել նախագծային ինստիտուտների հետ նախագծերի հստակեցման, ծավալների ճշտման և համադրումների գործում :
- Մրցույթի է ներկայացվել 2011 թվականին պետական բյուջեով նախատեսված հիմնանորոգման ենթակա օբյեկտների մրցույթների անցկացման փաստաթղթերի փաթեթները :

1. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզպետարանի պատվիրարությունը իրականացված շինարարական ծրագրեր՝

Այդ թվում

ա)

1	Հերիերի միջնակարգ դպրոց	65 917, 98 հազ. դրամ
---	-------------------------	----------------------

2	Սերսի միջնակարգ դպրոց	26 226, 0 հազ. դրամ
3	Արենիի մազադահլիճի վերակառուցում	50 000 ,0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	142 143,98 , 0 հազ. դրամ

բ) ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 108 - Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին հարկացվել է 260 000,0 հազ. դրամ գումար, մարզի առաջնահերթ լուծում պահանջող 16 օբյեկտների հիմնանորոգման համար Այդ թվում՝

1	ք. Եղեգնաձորի Նարեկացու 3 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	16 500,000
2	ք. Եղեգնաձորի Սպանդարյան 2 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	3 000,000
3	ք. Եղեգնաձորի Շահումյան 15 բազմաբնակարան շենքի տանիքի և մուտքերի հիմնանորոգում, շենքի ամրացում և պատշգամբների վերակառուցում	45 000,000
4	ք. Վայքի Զերմուկի խճուղի – 9 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	12 500,000
5	ք. Վայքի Զերմուկի խճուղի – 11 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	12 500,000
6	ք. Վայքի Զերմուկի խճուղի – 13 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	8 500,000
7	ք. Վայքի Զերմուկի խճուղի – 49 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	12 500,000
8	ք. Վայքի Զերմուկի խճուղի – 22 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	8 500,000
9	ք. Վայքի Շահումյան - 22 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	6 000,000
10	ք. Վայքի Շահումյան -102 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	12 500,000
11	ք. Վայքի Շահումյան -104 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	12 500,000
12	գ. Զիվայի միջնակարգ դպրոցի տանիքի հիմնանորոգում	14 000,000
13	գ. Մարտիրոսի միջնակարգ դպրոցի տանիքի	18

	հիմնանորոգում	000,000
14	ք. Ջերմուկի քաղաքային գաղարանի հիմնանորոգում	28 000,000
15	ք. Եղեգնաձորի Նարեկացու փողոցի բարեկարգում	35 500,000
16	ք. Վայքի Իսրայել Օրու փողոցի բարեկարգում	14 500,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	260 000,000

Նշված աշխատանքներն ավարտվել են ժամանակացույցով սահմանված ժամկետում;

գ) ՀՀ կառավարության 29.09.2011թ. թիվ 1436-Ն որոշմամբ պեղբյուզեից հրապապ ծրագրերի 2-րդ փուլի շրջանակներում հրականցվում և ընթացքի մեջ են մարզի առաջնահերթ լուծում պահանջող 14 օբյեկտների հիմնանորոգումը (Այն կշարունակվի մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ը) Այդ թվում՝

1	ք.Եղեգնաձորի Մոմիկի -6 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	13 000,00
2	ք. Վայքի Շահումյան-100 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	12 500,00
3	ք.Վայքի Ջերմուկի խճուղի-61 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	2 800,00
4	ք.Վայքի Շահումյան-28 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	8 700,00
5	ք.Եղեգնաձորի Շահումյան 15 բազմաբնակարան շենքի տանիքի և մուտքերի հիմնանորոգում, շենքի ամրացում և պատշգամբների վերակառուցում	33 000,00
6	Թառաթումբ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	15 000,00
7	Բարձրունի գյուղի խմելու ջրի արտքին ցանցի հիմնանորոգում	12 000,00
8	Խնձորուտ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	23 000,00

9	Ազատեկ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	20 000,00
10	Ռինդ գյուղի կոյուղագծի կառուցում	25 000,00
11	Սերս գյուղի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	12 000,00
12	Արտավան գյուղի համայնքային կենտրոնի վերակառուցում	13 200,00
13	ք.Եղեգնաձորի Գևորգյան փողոցի վերանորոգում, ասֆալտապատում	49 800,00
14	ք.Ջերմուկի երիտասարդական կենտրոնի նորոգում	20 000,00
	ԸՆԴԱՄԵՆԸ	260 000,0

2. ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ իրականացված շինարարական ծրագրեր

1	Ելփինի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	40 000, 0 հազ. դրամ
2	Քարազլխի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	20 526, 0 հազ. դրամ
3	Ամաղուի ակումբի վերակառուցում	75 000 ,0 հազ. դրամ
4	Մարզային գրադարանի հիմնանորոգում	38 159, 0 հազ. դրամ
5	Վայքի թիվ 1 դպրոցի հիմնանորոգում	110 000 ,0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	283 685 , 0 հազ. դրամ

3. ՀՀ կրթության նախարարության պատվիրատվությամբ իրականացված շինարարական ծրագրեր

1	Եղեգնաձորի քոլեջի հիմնանորոգում	81 500, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	81 500, 0 հազ. դրամ

4. ՀՀ մշակույթի նախարարության պատվիրատվությամբ իրականացված շինարարական ծրագրեր

1	Խաչիկ համայնքի հուշակոթողի հիմնանորոգում	20 000, 0 հազ. դրամ
---	--	---------------------

	ԸՆԴԱՄԵՆԸ	20 000, 0 հազ. դրամ
--	-----------------	----------------------------

5. Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության պատվիրարությունում իրականացված շինարարական ծրագրեր

1	Եղեգնաձորի դատարանի շենքի կառուցում	361 374, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	361 374, 0 հազ. դրամ

6. ՀՀ պաշտպանության նախարարության պատվիրարությունում իրականացված շինարարական ծրագրեր

1	Եղեգնաձոր քաղաքում բազմաբնակարան շենքի կառուցում	100 000, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	100 000, 0 հազ. դրամ

7. ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի պատվիրարությունում իրականացված շինարարական ծրագրեր

1	Ջերմուկի ջրմուղու վարչական շենքի կառուցում	30 000, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	30 000, 0 հազ. դրամ

8. ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի պատվիրարությունում իրականացված շինարարական ծրագրեր

1	Եղեգնաձորի ՏՀՏ –ի վարչական շենքի կառուցում	170 900, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	170 900, 0 հազ. դրամ

9. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրով իրականացված շինարարական ծրագրեր

1	Աղավնաձոր և Արփի համայնքների գազիֆիկացում	155 580, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	155 580, 0 հազ. դրամ

10. ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի պարզվիրավորությամբ 2011 թվականին իրականացվել և 2012թվականի ընթացքում շարունակվող շինարարական ծրագրեր՝

1	Խաչիկ գյուղի դպրոցի շենքի հիմնանորոգում	130 000, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	130 000, 0 հազ. դրամ

11. Ասիական զարգացման բանկի միջոցների հաշվին իրականացվել է՝

1.	Մալիշկայի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	110 000, 0 հազ. դրամ
2.	Գետափի խմելու ջրի ներքին ցանցի նորոգում	50 000, 0 հազ. դրամ
3.	Շատինի խմելու ջրի ներքին ցանցի նորոգում	10 000, 0 հազ. դրամ
4.	Նոր Ազնաբերդի խմելու ջրի ներքին ցանցի նորոգում	5 000, 0 հազ. դրամ
5.	Ջերմուկ քաղաքի կոյուղու ցանցի 3.3 կմ վերանորոգում և կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում	240 000, 0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	552 200 ,0 հազ. դրամ

12.«Վերջին օրերի սրբերի բարեգործություններ >> կորպորացիայի միջոցներով վերանորոգվել է՝

1.	Գլաձորի խմելու ջրի ներքին և արտաքին ցանցի վերանորոգում	7 000, 0 հազ. դրամ
2.	Հորսի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	6 000 ,0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	13 000 ,0 հազ. դրամ

13.«Ապավեն համայնքներին» հասարակական կազմակերպության միջոցներով իրականացվել է՝

1.	Արտաբույնք համայնքի խմելու ջրի ներքին ցանցի , կապատաժների , ջրամբարի վերանորոգում և սանիտարական գոտու կառուցում	6 290, 0 հազ. դրամ
2.	Ագարակաձոր համայնքի խմելու ջրի ջրատարի ներքին ցանցի վերանորոգում	5 100 ,0 հազ. դրամ
3.	Խաչիկ համայնքի խմելու ջրի ջրատարի ներքին ցանցի և կապատաժների վերանորոգում	5 500 ,0 հազ. դրամ
4.	Հորբատեղ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	1 200 ,0 հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ	18 090 ,0 հազ. դրամ

Ընդամենը մարզում կապիտալ ներդրումները կազմում են՝ **2 578 472. 98 հազ. դրամ:**

Ճարտարապետության բնագավառ

- ՀՀ Վայոց ձորի մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում՝

2011թ. Ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել մարզի 6 համայնքների գլխավոր հատակագծերի մշակման համար համապատասխան փաստաթղթերը՝

1. Շատին
2. Գլաձոր
3. Գնդեվազ
4. Ելփին
5. Ագարակաձոր
6. Ագատեկ

Քաղաքաշինության նախարարությունն ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը հավանություն է տվել նշված համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի առաջադրանքներին :

2011թվականի ընթացքում աշխատանքներ է տարվել գյուղական համայնքների ղեկավարների հետ պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.04.2010թ. № 208-Ն որոշման կատարման ուղղությամբ :

Մարզի 44 համայնքներից քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ապահովված է 4-ը, իսկ 40 համայնքներ չունեն գլխավոր հատակագծեր, որի պատճառով կառուցապատման աշխատանքները իրականացվում են անկանոն :

- Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության պատճառով համայնքներից մարզպետարան է ներկայացվել քաղաքաշինական նպատակով 8 հողհատկացման առաջարկություն այդ թվում՝ Եղեգնաձոր քաղաքից՝ 2, Վայք քաղաքից՝ 6, իսկ գյուղական բնակավայրերից հողհատկացման առաջարկություն չի ստացվել:

Նշված 8 հողհատկացման առաջարկություններից համաձայնեցվել է 7-ը, 1 հողհատկացում չի համաձայնեցվել նորմատիվատեխնիկական և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանելու պատճառով:

- Հյուսիս –հարավ ճանապարհային միջանցքի շինարարության իրականացման նպատակով մարզի տարածքով անցնող Մ-2, Ելփին-Սարավան միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի

պաշտպանական գոտում և օտարման շերտում կասեցվել է քաղաքաշինական նպատակով հողհատկացումների և շինարարության իրականացման աշխատանքները:

Միաժամանակ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհին հարող տարածքներում գտնվող օբյեկտներին տրվել է ծանուցագիր, որով տեղեկացվել է ՀՀ կառավարության 2009թ. № 968 Ա որոշման մասին:

- Մարզի բոլոր համայնքներում սահմանվել են գերեզմանատների իրավական հատուկ ռեժիմներ, ավագանու որոշմամբ աշխատանքներ են տարվել համայնքներում ընտանեական գերեզմանատեղեր հատկացնել օրենքով սահմանված կարգով (չափերը, հերթականության պահպանումը):

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության իրականացնելու կարգը սահմանելու մասին» 1998թ. հոկտեմբերի 12-ի 624 որոշումը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 27.05.2011թ. № 37 որոշմամբ ստեղծվել է հանձնաժողով և առաջադրանքով հաստատված ժամանակացույցի հիման վրա մարզի բնակավայրերում իրականացվել է պլանային ստուգումներ , քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեությունը վերահսկելու նպատակով:

Պլանային ստուգման արդյունքում կազմվել են արձանագրություններ, որոնք քննարկվել են մարզպետի մոտ համայնքների ղեկավարների մասնակցությամբ և տրվել է պարտադիր կատարման առաջադրանքներ, պլանային ստուգման ժամանակ հայտնաբերված բացթողումները վերացնելու նպատակով:

2011 թ. մայիսի 31-ից մինչև հունիսի 4-ը ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ տեսչական ստուգումներ է իրականացվել մարզի բնակավայրերում և կայացված որոշումը ուղարկվել է մարզի բոլոր համայնքներին և հետևողական աշխատանքներ է տարվել քաղաքաշինության բնագավառում տեղ գտած թերությունների կանխման ուղղությամբ:

- Քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ աշխատանքներ է տարվել ինքնակամ շինությունների հայտնաբերման ուղղությամբ, իսկ հայտնաբերված քաղաքաշինական նորմերով խախտման պատճառով նշանակվել է տուգանք 100 150 .0 հազ.դրամ:
- 2011 թվականի ընթացքում ստացվել է բազմաթիվ դիմում բողոքներ և գրություններ, որոնք ուսումնասիրվել և պատասխանվել է ժամանակին:

Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

Չնայած կատարված աշխատանքներին ջրամատակարարման և ջրհեռացման համակարգերում հիմնախնդիրները շատ են՝

1. Գյուղական համայնքներում խմելու ջրի արտաքին ցանցերը 90% հիմնանորոգված են, իսկ ներքին ցանցերը հիմնականում գտնվում են ֆիզիկապես մաշված վիճակում, որը պատճառ է դառնում ջրի կորստի և որակական հատկանիշների վատթարացմանը :

2. Հրատապ խնդիր է 2 քաղաքներում (Եղեգնաձոր, Վայք) կոյուղու մաքրման կայանների (կոլեկտորի) կառուցումը :

Կոմունալ տնտեսություն

Ջրամատակարարման և Ջրահեռացման Հարաֆային Շահագործման <Հարաֆային> տարածքային մասնաճյուղի կողմից սպասարկվում է 3 քաղաքային (Եղեգնաձոր ,Վայք, Ջերմուկ) և 3 գյուղական համայնքներ (Գետափ, Շատին, Արտաբույնք) վերջին երկուսը մասնակի , 2012թ-ից նաև Մալիշկա համայնքը: Մյուս գյուղական համայնքներում ջրամատակարարումը իրականացվում է տեղական ջրաղբյուրներից :

2011 թվականի ընթացքում ՋՋՀՇ <Հարաֆային> տարածքային մասնաճյուղի տնօրինության հետ կազմակերպվել են համատեղ քննարկումներ ազգաբնակչությանը տրվող խմելու ջրի որակական հատկանիշների ապահովման, ժամային գրաֆիկների ճշտման, ներքին ցանցերում կորուստների կրճատման ուղղությամբ :

Մարզպետարանը հսկողություն է իրականացնում ազգաբնակչության կողմից բարցրացված խնդիրների լուծմանը : Վերահսկում է կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների գանձմանը :

ՋՋՀՇ <Հարաֆային> տարածքային մասնաճյուղի կողմից 2011 թվականին կատարվել է ընթացիկ վերանորոգման աշխատանքներ : 2011 թվականի ընթացքում մարզում ջրամատակարարման և ջրհեռացման ծառայությունների դիմաց նախատեսված 157431.54 հազ. դրամ գումարի դիմաց գանձվել է 164347.55 հազ. դրամ, որը կազմում է 104.4 % :

Տարվում են աշխատանքներ կրճատելու ջրի կորուստները և բնակչությանը 24 ժամյա որոկյալ ջուր մատակարարելու ուղղությամբ :

2011 թվականի ընթացքում ծավալուն բացատրական և մասնագիտական աշխատանքներ են տարվում մարզի համայնքներում (որոնք մատակարարվում են լոկալ ջրաղբյուրներից), կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման գործընթացը կազմակերպելու և իրավական դաշտ ստեղծելու համար , արդյունքում Աղավնաձոր համայնքում ստեղծվել է << Աղավնաձոր>> ՀՈԱԿ, որը զբաղվելու է համայնքի ջրամատակարարման և ջրհեռացման խնդիրներով :

Համայնքների կողմից կնքվել են պայմանագրեր մարզային հակահամաճարակային կենտրոնի հետ, որոնք պարբերաբար վերահսկում են խմելու ջրի որակական հատկանիշները :

Մարզի քաղաքային համայնքներում աղբահանությունը կատարվում է կոմունալ ծառայությունների միջոցով իսկ գյուղական համայնքներում գյուղապետարանների միջոցով : 3 քաղաքային համայնքներում աղբահանության ծառայության դիմաց նախատեսված 15498.2 հազ. դրամի դիմաց գանձվել է 13327.3 հազ. դրամ, որը կազմում է 86.0 % :

Անհրաժեշտ խորհրդատվական աշխատանքներ են տարվում մարզի գյուղական համայնքներում աղբահանությունը կազմակերպելու ուղղությամբ :

Առաջարկվել է համայնքի ղեկավարներին տրամադրել համապատասխան տարածքներ որտեղ կթափվեն կենցաղային աղբը ;

Մարզպետարանի կողմից իրականացվում է պարբերաբար ստուգայցեր աղբավայրերի շրջակա միջավայրը չաղտոտելու և վարակազերծելու ուղղությամբ ;

Բնակարանաշինություն

- < Հայսեյսմշին ԿՊ և ԳՀԻ> ԲԲԸ կազմակերպության կողմից տրված եզրակացությունների հիման վրա հաշվառվել է մարզի բնակավայրերի վթարային բնակելի տները և ներկայացվել ՀՀ կառավարություն :

Մարզում հաշվառված է Եղեգնաձոր քաղաքի Միկոյան-16 բազմաբնակարան բնակելի շենքը, որը ունի 4 աստիճանի վթարայնություն : 5-րդ աստիճանի 4 , 4-րդ աստիճանի 213 և 3-րդ աստիճանի 215 անհատական բնակելի տներ:

- ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ ուսումնասիրել ենք մարզի տարածքում սողանքային և քարափլուզման երևույթների վիճակը, աշխատանքներ են տարվում նման երևույթների կանխարգելման , բնակիչների տարահանման կազմակերպման ուղղությամբ :

Սողանքային երևույթները առավել արտացոլված են մարզի 6 գյուղերում՝

Գնիշիկ, Մարտիրոս, Չիվա, Ագարակաձոր, Գետափ, Հորբատեղ, քարաթափումները՝ Շատին, Արտաբույնք, Հերմոն, Եղեգիս և Գետափ գյուղերում :

Գազիֆիկացում

2011 թվականին <ՀայրուսԳազարդ> -ի կողմից գազիֆիկացվել է 96 բնակարաններ, որից 43-ը բազմաբնակարան, 53- առանձնատուն:

Բնական գազ է մատակարարվում մարզի 3 քաղաքային և 9 գյուղական համայնքներում:

2011թ-ին անվտանգության ապահովման նպատակով բնակարաններում տեղադրվել է 6898 հատ անվտանգության ազդանշանիչ համակարգ, որից 2948-ը առանձնատներում, իսկ 3950 բազմաբնակարան շենքերում:

Գործող Իրան-Հայաստան գազամուղը հնարավորություն է ընձեռնում հետագայում կատարել ուղեգծին հարակից մարզի համայնքների գազիֆիկացման աշխատանքների կատարմանը:

Մարզի Փոռ և Զառիթափ համայնքներում գազատարի շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում տեղ գտած թերությունների պատճառով չի շահագործվում: Աղավնաձոր, Արփի և Հերիեր համայնքներում գազիֆիկացման շինմոնտաժային աշխատանքները ավարտվել են, բաժանորդների առկայության դեպքում կշահագործվի:

Տրանսպորտ և ճանապարհաշինություն

2011թ. ՀՀ պետական բյուջեով Վայոց ձորի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար հատկացվել է 297 մլն դրամ գումար, իսկ 2011թ. մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար 65.422 մլն դրամ գումար:

Վերահսկվել է մարզում վերանորոգվող ավտոճանապարհների աշխատանքների կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում շինարարական կազմակերպություններին ցուցաբերվել է աջակցություն:

ՀՀ պետական բյուջեով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության միջոցով 2011թ. մարզում կատարվել է **903.2 մլն. դրամի** ավտոճանապարհների հիմնանորոգման, վերանորոգման և փլուզված հատվածների վերականգնման աշխատանքներ.

1. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 97+220 – կմ 97+280 սողանքային տեղամասի վերանորոգում - 93.2 մլն. դրամ:

2. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 115կմ-ում փլվածքային տեղամասի վերականգնում - 25.6 մլն. դրամ

3. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 119կմ-ում փլվածքային տեղամասի վերականգնում - 43.4 մլն. դրամ

4. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 121.5կմ -ում Գետափի կամրջի վերանորոգում - 56.9 մլն. դրամ

5. Մ-10 – Հորս ավտոճանապարհի 2.8 կմ հատվածի հիմնանորոգում - 420.5մլն. դրամ

6. Մ-10 – Շատին - Գողթանիկ ավտոճանապարհի 1-ին կմ-ում փլուզված հատվածի վերականգնում - 118.4 մլն. դրամ

7. Մ-10 – Քարագլուխ ավտոճանապարհի հիմնանորոգում – 145.2 մլն. դրամ

Ֆինանսավորման բոլոր աղբյուրների գծով 2011 թ. մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմնանորոգման, վերանորոգման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ներդրումները կազմում են 1265.6 մլն դրամ:

Չնայած կատարված աշխատանքներին դեռևս կան ավտոճանապարհներ / պետ. խճուղի – Հերիեր – Կարմրաշեն, պետ. խճուղի–Արտավան, Ջառիթափ – Գոմք – Կապույտ, Վայք – Արին, Սերս – Բարձրունի, պետ. խճուղի – Ջեղեա, Հ-86 – Հորբատեղ, Մ-2 – Գետափ, Հերմոն – վարդահովիտ , Հերմոն – Գողթանիկ, Արփի – Մոզրով, պետ. խճուղի - Ելփին և Չիվա - Ռինդ ավտոճանապարհի 1,8 կմ հատվածը / որոնք գտնվում են անբարեկարգ վիճակում:

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով, մրցութային կարգով:

“Մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում և հանրակրթական դպրոցների տրանսպորտային ծառայությունների վճարներ” ծրագրով կազմակերպվել է 11 երթուղիներում մարկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխման աշխատանքներ:

Մշտական հսկողություն է իրականացվել էլ.ցանցերի, կապի, հեռուստատեսության և “Հայփոստ”-ի բնագավառներում կազմակերպությունների բնակչության սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:

Մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է համատեղ հանձնաժողով /էլ. ցանցերի և կադաստրի ներկայացուցիչներից/ էլ. հաղորդման գծերի անվտանգության գոտիներում կառուցված շենք – շինությունների խախտումների ուղղությամբ, կատարվել է գույքագրում: Այժմ աշխատանքներ են տարվում նմանատիպ խախտումներ թույլ չտալու և այն վերացնելու համար:

Առողջապահություն և սոցիալական ապահովություն

1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու տարում զգալի աշխատանքներ են կատարվել մարզի ազգաբնակչության առողջապահության և սոցիալական հարցերի բարելավման ուղղությամբ:

Մարզի սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում՝ Եղեգնաձոր, Վայք և Ջերմուկ տարվա ընթացքում փաստագրվել են 2400 ընտանիքներ՝

Եղեգնաձորի տարածաշրջան	1677 ընտանիք
Վայքի տարածաշրջան	459 ընտանիք
Ջերմուկի տարածաշրջան	264 ընտանիք

Նպաստի իրավունք է ստացել 1858 ընտանիք:

2010թ. համեմատությամբ նպաստառու ընտանիքների թիվը նվազել է 119 ընտանիքով:

Սոցիալական աջակցության ծրագրի շրջանակներում վճարված ընտանեկան նպաստների ընդհանուր գումարը տարվա ընթացքում կազմել է 565.6 մլն դրամ:

Հրատապ օգնության շրջանակներում վճարված ընդհանուր գումարը կազմել է 33.8 մլն. դրամ:

Շարունակվում է ավանդների փոխհատուցման աշխատանքները՝ 2011թ. ավանդի փոխհատուցում է տրվել 403 քաղաքացու:

2011 թվականին երեխայի ծննդյան միանվագ նպաստ է ստացել 649, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ է ստացել 275 ,սոցիալական քարտ է տրամադրվել 3861 մարդու:

Մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում 2011թ. գրանցվել են 809 գործազուրկներ, աշխատանքի են տեղավորվել 375 մարդ, գործազրկության մակարդակը մարզում կազմել է 4.8% 2010թ. 4.4% փոխարեն:

Մարզի երեք ՍԱՏԿ-ներում հաշվառված են 10406 կենսաթոշակառուներ, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 29.4 հազ դրամ :

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, Արցախյան պատերազմում զոհված, հաշմանդամ դարձած և դժվարին պայմաններում ապրող ընտանիքների սոցիալական աջակցության խնդիրները: Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի մոտ կայացած ընդունելության եկած 762 քաղաքացիների հատկացվել է շուրջ 19882.0 հազ. դրամ դրամական օգնություն::

Աղյուսակ 1. Սոցիալական բնագավառին առնչվող ցուցանիշներ

h/h	Ցուցանիշներ	2007թ.	2008թ..	2009թ..	2010թ.	2011թ.
1.	Կենսաթոշակառուների թիվը	10498	10685	10438	10243	10406
2.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	11	8	4	4	5
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	533	459	369	452	426
4.	Մանկուց հաշմանդամներ	237	208	173	158	163
5.	1-ին խմբի հաշմանդամներ	190	201	197	187	187
6.	2-րդ խմբի հաշմանդամներ	1623	1864	1708	1751	1850
7.	3-րդ խմբի հաշմանդամներ	1114	1360	1505	1761	1963
8.	Կենսաթոշակի միջին ամսական չափը, դրամ	13521	22831	26424	28334	29413
9.	Ընդամենը ամսական վճարվող կենսաթոշակի չափը մարզում, մլն. դրամ	136.6	227.0	260.1	292.3	187.6
10.	Ընտանեկան նպաստ են ստացել /միջին/ , ընտանիք	2511	2598	2144	1977	1858
11.	Վճարվել է ընդամենը	509.9	624.4	565.9	576.9	565.6

	նպաստ, մլն. դրամ					
12.	Հրատապ դրամական օգնություն են ստացել /միջին/, ընտանիք	228	156	279	229	206
13.	Վճարվել է հրատապ դրամական օգնություն, մլն. դրամ	19.8	14.9	33.8	29.4	33.8
14.	Գործազուրկների թիվը մարզում, մարդ	1050	1040	1081	1000	809
15.	Գործազրկության մակարդակը մարզում, %	3.5	3.4	3.9	4.4	4,8
16.	Տեղավորվել են աշխատանքի, մարդ	376	398	343	451	375

II. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Վայոց Ձորի մարզում գործում են 9(իննը) պետական մասնակցությամբ առողջապահական առևտրային ընկերություններ, որոնց կողմից հիվանդանոցային և առաջնային բուժօգնություն են ստանում մարզի մոտ 55.9 հազար բնակիչներ, նրանցից՝ 42.9 հազարը- մեծահասակներ, 13.0 հազարը- անչափահասներ: Յուրաքանչյուր տարի մարզպետարանի կողմից պատշաճ մակարդակով կազմակերպվում և ՀՀ ԱՆ է ներկայացվում բուժհիմնարկների գալիք տարվա բյուջեները ձևավորման նախնական փաստաթղթերը:

Յուրաքանչյուր տարվա Հունվար ամսին տարեկան բժշկական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի վիճակագրական վարչություն, հետագայում հաշվետվություններում արտացոլված ցուցանիշները հանրապետական բազաներում տեղադրելու համար: Հիվանդանոցներում ծավալված է 90 մահճակալ: Տուբերկուլյոզի մարզային կորոդինատորը կազմակերպում է ֆթիզատորների (տուբերկուլյոզի գծով բժիշկներ) աշխատանքը: Այսօրվա դրությամբ մարզի բուժհիմնարկներում հաշվառված են 32 տուբերկուլյոզով հիվանդներ: Իմունիզացիայի են ենթարկվել մարզի 4091քաղաքացիներ:

2011թ. գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատությունների ֆինանսավորմանը նախատեսված է եղել 512.8մլն. դրամ, կասեցվել է 13.0մլն. դրամ, մնացած 498.5մլն. դրամից 485.5 մլն. դրամը ուղղվել է առողջապահական հաստատություններում ընթացիկ ծախսերի

/աշխատավարձ, սոցվճար, դեղորայք և այլն/ կատարմանը, չկատարված բյուջեն կազմել է 13 մլն. դրամ:

Վերահսկողություն է իրականացվել բժշկական ծառայությունների ճիշտ կիրառման և վճարովի միջոցներով կատարված բժշկական ծառայությունների նկատմամբ: Կատարվել են 43.8մլն. դրամի բժշկական ծառայություններ:

Մարզպետի աջակցությամբ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել մարզի 84 քաղաքացիներ:

ՀՀ կառավարության սահմանած կարգով ՀՀ ԱՆ դեղերի բաժին է ներկայացվում հաշվետվություն հիվանդներին անվճար հատկացվող դեղորայքի և դրանց շարժի մասին, որից հետո առանձին հիվանդություններով տառապող անձանց նախարարության դեղաբազաններից այդ նպատակով կենտրոնացված կարգով և մարդասիրական օգնության ճանապարհով հատկացվում է դեղորայք: Այդ նպատակով դեղորայք է հատկացվում հատուկ հիվանդություններով տառապող/էպիլեպսիա, պարբերական հիվանդություն, չարորակ նորագոյացություններ, ոչ շաքարային դիաբետ, հոգեկան հիվանդություններ, շիզոֆրենիա, շաքարային դիաբետով հիվանդներ/ մոտ 2000հիվանդների:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել բնակչությանը թունավորումից զերծ պահելու ուղղությամբ: Յուրաքանչյուր ամսվա համար թունավորումների վերաբերյալ տվյալներ է ներկայացվում փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային վարչությանը: Կազմակերպվում է օձի հակաթույնի և տաբեր տեսակի շիճուկների և վակցինաների ստացումը համապատասխան կազմակերպություններից և դեղատնային ցանցից:

Զգալի աշխատանքներ են տարվել բնակչությանը խմելու որակյալ ջրով ապահովելու ուղղությամբ: 2011թ. ընթացքում ջրմուղների գլխամասային կառույցներից, արտաքին ցանցերից և ՕԿԱ-երից մանրէաբանական հետազոտության է ենթարկվել 970խմելու ջրի նմուշ, որից 10-ում արձանագրվել է շեղում, իսկ ներքին ցանցերից 2730 նմուշ, որից 238-ում արձանագրվել են նորմայից շեղումներ:

ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Վայոց Ձորի մարզային կենտրոնի պետը դիմել է մարզպետին գյուղական ջրմուղներում վարակազերծման և ջրի որակի հսկողության խնդիրների վերաբերյալ:

Արդյունքում գյուղական գրեթե բոլոր ջրմուղները պայմանագիր են կնքել “ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Վայոց Ձորի մարզային փորձագիտական կենտրոն” ՊՈԱԿ-երի հետ խմելու ջրի լաբորատոր հետազոտությունների համար, որը այս պահին իրականացվում է ըստ պայմանագրերի, իսկ վճարումները, իհարկե, ուշացումներով, բայց կատարվում են:

Մարզի բնակավայրերի սանիտարական վիճակը և աղբահանության խնդիրները քննարկվում են համայնքների ղեկավարների հետ: Կազմակերպված աղբահանման վայրերի թիվը 2010-ին և 2011-ին 7 է, իսկ անկազմակերպ անցած և այս տարի անփափոխ՝ 37: Չթույլատրված աղբավայրերի թիվը 2010-ին 4, 2011-ին նույնպես: Բնակավայրերի տարածքում խրոնիկ աղբավայրերի թիվը ֆիքսված չէ:

Իմունոկանխարգելման գործընթացները և նրանց հետ կապված խնդիրները մշտապես քննարկվում են մարզպետարանի առողջապահության բաժնում և զեկուցվում մարզպետին: Վարակիչ հիվանդությունների բռնկումներ, խմբակային թունավորումներ չեն արձանագրվել:

Մարզում իմունոկանխարգելման աշխատաքները պատվաստման տարբեր տեսակների գծով և նրանց ընդգրկվածությունը կազմում է 99%:

2011թ. պետական բյուջեի միջոցներով ՀՀ կառավարության կողմից մարզպետարանի ենթակայության առողջապահական հիվանդանոցային հաստատություններին որպես նվիրատվություն հատկացվել են 4ռեանիմոբիլ շտապ օգնության ավտոմեքենաներ 61,0 մլն. դրամ արժողությամբ:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

Մարզպետարանը ղեկավարվելով երեխաների պաշտպանության ոլորտին վերաբերվող ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընդունված իրավական ակտերով, մարզպետի որոշումներով ու կարգադրություններով 2011թ. իր գործունեությունը կազմակերպել է հետևյալ ուղղություններով:

Մարզում հաշվառվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 117 երեխա, որոնք ԱԾԽՄ, երկկողմանի, միակողմանի ծնողազուրկ, սոցիալապես ծայրահեղ անապահով ընտանիքների երեխաներ են, հաշմանդամներ, հակասոցիալական վարքագիծ ունեցող, ոստիկանության տարածքային բաժինների ԱԳ խմբերի կողմից հաշվառված երեխաներ: Նրանց կարիքների գնահատման, սոցիալ-հոգեբանական ծրագրեր կազմելու համար կազմակերպվել են տունայցեր, կազմվել 57 անհատական ծրագրեր: Նշված երեխաներից <<Նորք>> տեղեկատվական համակարգի << Մանուկ>> ծրագրում գրանցվել է 57 երեխա: Մարզում առանց ծնողական խնամքի մնացած 32 երեխաներից 12-ի համայնքային, տարածքային և կենտրոնացված հաշվառումը կատարվել է 2011 թվականին: Նշված 32 երեխաներից 12-ի նկատմամբ սահմանվել է խնամակալություն և հոգաբարձություն 2011թ., 15 երեխաներ գտնվում են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում: Մարզպետարանի կողմից մշտական հսկողության

տակ են գտնվել խնամակալության և հոգաբարձության մարմինների ընդունած որոշումների համապատասխանությունը իրավական ակտերին:

Մարզում 2011թ-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ հաշվառված է 157 հաշմանդամ երեխա, նրանցից 103-ն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, Երևանի ԲՀՄ գնահատման կենտրոնի կողմից տված եզրակացության հիման վրա 2011թ. վկայագրվել է 23-ը, որից 70-ը ընդգրկված է ներառական կրթության դասընթացներում, 3-ի ուսուցումը կազմակերպվում է տնային պայմաններում, 7-ը՝ հատուկ դպրոցներում:

Մարզի 44 համայնքներում գործում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված բոլոր որոշումներն ընդունվում են միայն նրանց եզրակացության հիման վրա:

Մարզպետարանի և համայնքապետերի համատեղ աշխատանքի շնորհիվ ծննդի պետական գրանցում չստացած 5 երեխա ստացել է ծննդյան վկայական: Ոստիկանության տարածքային բաժինների հետ համագործակցության արդյունքում մարզում զգալիորեն կրճատվել է իրավախախտ և հանցագործություն կատարած երեխաների թիվը: 2011թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի տարածքային ոստիկանության բաժինների ԱԳ խմբերում հաշվառված է 8 անչափահաս:

2011 թվականին որդեգրման համար դիմել է մարզի 5 բնակիչ, նրանցից 2-ը մերժում է ստացել, կատարվել է 2 որդեգրում, որդեգրման համար գրանցվել է 3 քաղաքացի: Մարզում առանձնահատուկ ուշադրության է արժանացել դպրոցահասակ երեխաներին կրթության համակարգում ընդգրկելու խնդիրը: Հետևողական աշխատանքի արդյունքում մարզում չկան հանրակրթությունից դուրս մնացած, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաներ: Հատուկ ուշադրություն է դարձվել մարզում առկա ընտանիքների տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական վիճակի ուսումնասիրության հարցերին: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մարզում կա 16365 ընտանիք, նրանցից 604-ը բազմանդամ է / 7 և ավելի շունչ/, բազմազավակ ընտանիքներ են 169-ը / 4 և ավելի երեխա/: Միջոցներ են ձեռնարկվում բազմազավակ ընտանիքների աջակցության ծրագիր իրականացնելու համար: Զգալի աշխատանքներ է կատարվել մարզում գենդերային հիմնահարցերի կազմակերպման ուղղությամբ: 2011 թվականին գենդերային հիմնահարցերին վերաբերվող հինգ սեմինար է կազմակերպվել մարզպետարանի կողմից: Մարզպետարանը համագործակցում է UNICEF-ի, «Հույս և օգնություն» Հ/Կ-ի, Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի «Վորլդ Վիժն»

միջազգային կազմակերպության, <<Դեմոկրատիան այսօր>>
հասարակական կազմակերպության հետ:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Մարզում գործում է 51 հանրակրթական դպրոց, այդ թվում 1 տարրական, 15 հիմնական և 35 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան, 3-ը ավագ դպրոց ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, 5-ը՝ բարձր լեռնային բնակավայրերում:

Մարզային ենթակայությամբ գործող 38 դպրոցներում սովորում է 6291 աշակերտ, որոնք կոմպլեկտավորված են 483 դասարաններում: Մարզի սահմանափակ կարողություններ ունեցող 32 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար: Համայնքների ղեկավարների, մարզի վիճակագրական ծառայության և ԶԱԳՍ-ի բաժինների հետ համագործակցելով իրականացվում է դպրոցահասակ տարիքի երեխաների հաշվառումը, ինչի արդյունքում մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Մարզային ենթակայության 38 դպրոցներում աշխատում են 964 ուսուցիչներ, որոնցից 774-ը ունեն բարձրագույն, կամ բարձրագույն մանկավարժական կրթություն (80%-ը), մնացած 190-ը՝ միջնակարգ մասնագիտական:

Ուսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը կազմում է 6,5:

Դասարանի միջին խտությունը 13,2 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17,1 ժամ:

Բոլոր դպրոցներն ունեն համակարգիչներ, իսկ 19 դպրոցներում գործում են համակարգչային դասարաններ, որոնք օգտվում են ինտերնետ կապից: Համակարգիչներով դպրոցները շարունակվում են համալրվել: Շարունակվում է նաև ինտերնետ կապով դպրոցներն ապահովելու ծրագիրը::

Ատեստավորման նպատակով տարբեր առարկաների գծով վերապատրաստվել են ուսուցիչների 20 տոկոսը: Առաջիկայում կսկսվի նրանց ատեստավորման գործընթացը:

Տարվա ընթացքում դպրոցի կառավարման իրավուքի ձեռքբերման նպատակով անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որից հետո սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների կազմակերպվել է գործադիր տնօրենի

պաշտոնի համար մրցույթներ: 34 դպրոցներում ընտրվել են տնօրեններ, իսկ 5 դպրոցներում / Արենիի, Մարտիրոսի միջն և Ջերմուկի N3, Մոզրովի, Փոռի հիմնական/ տնօրեններ չեն ընտրվել հավակնորդ չլինելու պատճառով:

Ապահովված է դպրոցական շենքերի պահպանությունը: 2011թ. շուրջ 88մլն. դրամի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մարզի 3 դպրոցներում /Հերիեր, Սերս, Արենի/:

Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, որոնց վարձավճարները հավաքագրվել են 90 տոկոսով, հավաքագրումը շարունակվում է:

Օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել են շուրջ 780 աշակերտ, որոնցից 29-ը մասնակցել են հանրապետական փուլին: Նրանցից 7-ը պարգևատրվել են գովասանագրերով և դիպլոմներով:

Աշխատանքներ են տարվում դպրոցական գույքը թարմացնելու, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ:

Մարզում գործում է համայնքային ենթակայության 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 805 երեխաներ: Ցավոք մի շարք համայնքներում չկան նախադպրոցական հիմնարկներ, ինչի հետևանքով այդ համայնքներում անլուծելի է մնում նախադպրոցական կրթության, որպես միջնակարգ կրթության նախապատրաստման կարևորագույն օղակի, խնդիրը:

Մարզի 22 համայնքներում բացվել են նախակրթարաններ, որոնցում ընդգրկվել են 4-5 տարեկան 482 երեխաներ 22 խմբով:

Գործում են մարզային և համայնքային ենթակայության 46 գրադարան, 31 մշակույթի տուն, 3 արվեստի, 1 գեղարվեստի և 2 երաժշտական դպրոց, 2 թանգարան և 2 մանկական ստեղծագործական կենտրոններ, պատկերասրահի 2 մասնաճյուղ:

Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքում գործում է մարզային ենթակայության մշակույթի տուն, երաժշտական դպրոց և երկրագիտական թանգարան: Մարզի մշակութային և ստեղծագործական կոլեկտիվները հաջողությամբ մասնակցում են հանրապետական և մարզային մշակութային փառատոններին, մրցույթներին:

Մարզի մշակութային կյանքին աշխուժություն է հաղորդում տուրիզմի զարգացման արդեն զգացվող միտումները, որին մեծապես նպաստում են մարզի տարածքում առկա պատմամշակութային արժեք ներկայացնող վանական և եկեղեցական համալիրները, որոնց պահպանության համար ձեռնարկված են բոլոր անհրաժեշտ միջոցները:

Մշակութային կյանքից ետ չի մնում սպորտն ու երիտասարդության հետ տարվող աշխատանքները: Տարվա ընթացքում կազմակերպվել են սպորտային տարբեր միջոցառումներ, որոնց մասնակցում են մարզի բոլոր համայնքների ներկայացուցիչները:

Համայնքային ենթակայությամբ գործում են 3 մարզադպրոցներ և մշակույթի նախարարության ենթակայությամբ երիտասարդական կենտրոն: Մարզի 3 քաղաքներում գործում են Հայաստանի Շախմատի ակադեմիայի մասնաճյուղեր: Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքում կառուցվել է լողավազան, որը հրաշալի նվեր է մարզի պատանիների ու երիտասարդների համար:

Հանրապետական և միջազգային մրցումներում թեև համեստ են մարզի նվաճումները, սակայն զգացվում է դրանք զարգանալու ակնհայտ միտումներ:

ՏԻՄ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգում

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ , ապահովել մարզի կապի , էներգետիկայի , հարկային, արտակարգ իրավիճակների , զինկոմիսարիատների , ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները :

ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման , ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու , որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և բյուջեի հրապարակայնության ապահովման ուղղությամբ :

Համակարգվել է ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Մարզպետարանը համագործակցված աշխատանքներ է տարել մարզի ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման ուղղությամբ .

Համակարգվել են Թառաթումբի , Չիվայի և Գողթանիկի համայնքների ղեկավարների ընտրությունների ուղղությամբ տարվող աշխատանքները :

Համակարգվել է համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումներ և տարեկան հաշվետվությունները :

Համակարգվել են մարզի տեղական ինքնակառավարման և հանրապետարական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը :

Մարզպետի կողմից համակարգվել են զորակոչի , զորահավաքի և վարժական հավաքների անցկացման աշխատանքները :

ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն վարչական հսկողություն է իրականացվել մարզի Եղեգիսի , Հորբատեղի , Թառաթումբի , Հորսի , Մալիշկայի , Սալիի , Քարագլխի , Ջեղեայի , Արենիի , Սերսի , Խնձորուտի և Հերիերի գյուղական համայնքներում :

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Համայնքային ծառայության մասին>> , <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ :

Թերությունների և բացթողումների վերաբերյալ կազմվել են ակտեր , քննարկվել և սահմանվել են ժամկետներ թերությունների վերացման ուղղությամբ : Համայնքների ղեկավարների կողմից ներկայացվել է տեղեկատվություն թերությունների շտկման կապակցությամբ :

Հետևողական աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմիններում գործավարության վիճակը բարելավելու ուղղությամբ :

Հայտնաբերվել են թերություններ ու բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման>> և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ : Կազմակերպվել են քննարկումներ թերությունների վերացման կապակցությամբ . ցուցաբերվել է մեթոդական , խորհրդատվական օգնություն:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ : Համայնքներում ավագանու կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ :

Հաշվետու ժամանակաշրջանում համակարգվել են ՏԻՄ-երում առևտրի , հանրային սննդի և սպասարկման բնագավառներում կազմակերպվող աշխատանքները, որոնց արդյունքների վերաբերյալ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ :

2011 թվականի ընթացքում վարչության կողմից կազմակերպվել են համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների սեմինար ուսուցումներ :

2011 թվականի ընթացքում մարզի համայնքներում համայնքային ծառայության 26 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող են ճանաչվել և համայնքային ծառայության պաշտոններում նշանակվել են 21 քաղաքացի :

2011 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ ձեռք է բերվել համաձայնություն մարզի Աղնջաձորի , Եղեգիսի , Հորսի , Հորբատեղի և Փոռի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերում մինչև 2015 թվականի հունվարի 1-ը «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ա/ կետով ներկայացված բարձրագույն կրթության չափանիշը չընդգրկելու կապակցությամբ :

2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում համայնքային ծառայության պաշտոնների թիվը 184 է , որից թափուր են 9-ը պաշտոններ : 9-ը թափուր պաշտոններից 8-ը համալրված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով :

2011 թվականի ընթացքում ՀՀ փոխվարչապետ , տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված պլան-գրաֆիկի համաձայն իրականացվել է 83 համայնքային ծառայողների վերապատրաստում : 2011 թվականին վերապատրաստված 83 համայնքային ծառայողներից հաշվետու ժամանակաշրջանում ատեստավորվել են 78-ը , 3 համայնքային ծառայողներ ազատվել են պաշտոնից իրենց դիմումների համաձայն , 2 համայնքային ծառայող էլ չեն ներկայացել ատեստավորման հարգելի պատճառով : 2010 թվականին վերապատրաստված 25 համայնքային ծառայողներից հաշվետու ժամանակաշրջանում ատեստավորվել են 24-ը , 1 համայնքային ծառայող ազատվել է պաշտոնից իր դիմումի համաձայն :

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից հետևողական աշխատանքներ են տարվել Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի նոյեմբերի 24-ի N 143-Ա և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավարի 2011 թվականի նոյեմբերի 24-ի N 280-Ա հրամաններով ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի, Ելփինի, Արտաբույնքի, Ագարակաձորի, Վերնաշենի, Չիվայի, Գնդեվազի և Սարավանի համայնքների ղեկավարների աշխատակազմերում իրականացված կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ :

Մարզպետարանն ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի փոխհարաբերությունները .

- կազմակերպվել են խորհրդակցություններ ,
- ապահովվել է մարզխորհրդի նիստերին ՏԻՄ-երի մասնակցությունը,
- կազմակերպվել են անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման և ստացման աշխատանքները ,

-հետևողական աշխատանքներ են տարվել ՏԻՄ-երի կողմից ընդունված իրավական ակտերի մարզպետարան առաքելու և դրանց ուսումնասիրման ուղղությամբ :

Մարզպետարանը հետևողական աշխատանքներ է տարել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ : Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ , որոնց միջոցով համայնքների ազգաբնակչությունը իրազեկվել է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ : Կատարված աշխատանքների մասին եռամսյակը մեկ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն :

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ : Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներից մարզպետարանը սահմանված կարգով ստացել է մարզպետարանի առջև ծառայած գործառույթների ու խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն :

Ֆինանսների և սոց. տնտ. զարգացում

“ՀՀ 2011թ. պետական բյուջեի մասին” ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանի ապարատի և մարզային ենթակայության կազմակերպությունների տարեկան ճշտված պահպանման ծախսեր են նախատեսվել է 2573949 հազ. Դրամ որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է՝ 2568521,5 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 99.8 %-ով:

Գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմինների պահպանում:

Վայոց ձորի մարզպետարան ծրագիր՝ 01-01-01-03

ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսվել է 209488.1 հազ.դրամ պահպանման ծախսեր, որի դիմաց փաստացի ծախսերը կազմել են՝ 207439,68 հազ.դրամ, ֆինանսավորվել է՝ 99.0 %-ով:

Տնտեսագիտական դասակարգման առանձին հոդվածներով խնայողությունը կազմել է 2008,42 հազ.դրամ:

- Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

- Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում ծրագիր 04-05-01-06

ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր՝ գումարով 65422.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է՝ 65422.0 հազ.դրամ, ֆինանսավորվել է 100 %-ով:

- Կրթության ոլորտ

- Հանրակրթական ուսուցում ծրագրեր՝ 09-01-02-01, 09-02-01-02, 09-02-02-02

ՀՀ 2011թ. ճշտված պետական բյուջեով նախատեսվել է Վայոց ձորի մարզպետարանին 1609784.4 հազ.դրամ, ֆինանսավորվել է՝ 1609783.8 հազ. դրամ կամ կատարվել է 100 %-ով:

- Ներառական կրթություն ծրագրեր՝ 09-01-02-05, 09-02-01-06, 09-02-02-06

ՀՀ 2011թ. ճշտված պետական բյուջեով նախատեսվել է Վայոց ձորի մարզպետարանին 16687,2 հազ.դրամ, ֆինանսավորվել է՝ 16687,2 հազ. դրամ կամ կատարվել է 100 %-ով:

- Հանրակրթական ծրագրերի հրականացմանն օժանդակության շրջանակներում հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայության մատուցում ծրագիր՝ 09-06-01-14

ՀՀ 2011թ. ճշտված պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր՝ գումարով 13353.2 հազ.դրամ, որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 13353.2 հազ.դրամ տա: Ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

- Արտադպրոցական դաստիարակություն

/ Եղեգնաձորի Երաժշտական դպրոց

09-05-01-01 ծրագրով մարզի Եղեգնաձորի օԵրաժշտական դպրոցօ ՊՈԱԿ-ին ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսվել են 25049 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 100%-ով:

- **Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում**

09-05-01-04 ծրագրով Վայոց ձորի մարզպետարանին հատկացվել է 14705.3 հազ. դրամ, որը ֆինանսավորվել է 100 %-ով:

- **Կրթական օբյեկտների հիմնանորոգում**

09-06-01-03 ծրագրով ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսվել են 144340.0 հազ. դրամ ծախս, որի դիմաց ֆինանսավորվել է 142018.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 98.4 %-ով: Տարբերությունը կազմում է 2322.0 հազ. դրամ, որը հատկացված գումարի և նախագծանախահաշվային փաստաթղթերով հաշվարկված գումարի տարբերությունն է:

- **Մշակույթի ոլորտ**

- **Թանգարանային ծառայություններ և սուբսիդիա**

08-02-02-01 ծրագրով ՀՀ 2011թ. պետական բյուջեով Եղեգնաձորի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ի պահպանման ծախսեր են նախատեսվել 9256.4 հազ. դրամ, ֆինանսավորվել է 100 %-ով:

- **Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում /սուբսիդիա/**

08-02-03-02 ծրագրով Եղեգնաձորի մշակույթի տուն՝ ՊՈԱԿ-ին ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսվել է 3482.7 հազ. դրամ ֆինանսավորվել է 100 %-ով:

- **Մշակութային միջոցառումների իրականացում**

08-02-05-04 ծրագրով Վայոց ձորի մարզպետարանին 2010թ. պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր 4938,5 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 4938.5 հազ. դրամ ֆինանսավորվել է 100.0 %-ով:

- **Հիմնական խմբին չդասվող ծախսեր**

- **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ ծրագիր՝ 11-01-01-01**

ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսվել է հատկացնելու 527277.2 հազ.դրամ փաստացի ֆինանսավորվել է 526180.37 հազ.դրամ տարբերությունը կազմում է 1096.83 հազ.դրամ, որը հատկացված և նախագծանախահաշվային փաստաթղթերով հաստատված գումարի տարբերությունն է:

2011թ.-ին մարզի 44 համայնքների տեղական բյուջեներով՝ տարվա ընթացքում կատարված ճշտումներով ընդամենը եկամուտներ են նախատեսվել 1050929 հազ.դրամ, տեղական բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 1051189 հազ.դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը կատարվել է՝ 100.0 %-ով:

Տեղական բյուջեների տարեսկզբի դրամական մնացորդը վարչական և ֆոնդային բյուջեների գծով ընդամենը կազմել է 193967.3 հազ.դրամ, հարկեր և տուրքեր են նախատեսվել 204152.8 հազ.դրամ, ոչ հարկային եկամուտներ են նախատեսվել 142295.3 հազ.դրամ: Համահարթեցման կարգով ՀՀ 2011թ. պետական բյուջեից մարզի համայնքներին հատկացվել է 664523.0 հազ.դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Հարկային եկամուտների, տուրքերի և ոչ հարկային եկամուտների գծով հաշվետու տարում համայնքների բյուջեներով նախատեսվել է՝

- Հողի հարկ՝ 82769 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 84733.7 հազ.դրամ, կամ կատարվել է 102.4%-ով:

- Գույքահարկ՝ 94553 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 104452 հազ.դրամ, կամ կատարվել է 110.5 %-ով:

- Պետական տուրքեր 8000.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 7399 հազ.դրամ, կամ կատարվել է 92.5%-ով

Տեղական տուրքեր 18850 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 14087.9 հազ.դրամ, կամ կատարվել է 74.7%:

- Համայնքների սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև նրանց վարչական սահմաններում գտնվող պահուստային հողերի, գույքի վարձակալության և արոտի վարձավճարներ են նախատեսվել 46822 հազ.դրամ, որի դիմաց հավաքագրվել է 66922 հազ.դրամ, կամ կատարվել է 142.9 %-ով:

- Տեղական վճարներ են նախատեսվել 5496 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 2463.9 հազ.դրամ, կամ կատարվել է 44.8%-ով:

- Այլ ոչ հարկային եկամուտներ են նախատեսվել 89331.9 հազ. դրամ, փաստացի գանձվել է 68653.4 հազ. դրամ, կամ կատարվել է 76.9%-ով:

ով:

- 2011թ. ընթացքում նախատեսվել է պատվիրակված լիազորություններ 24590 հազ. դրամ, որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 24590 հազ. դրամ, կամ ֆինանսավորվել է 100 %-ով:

- 2011թ. ընթացքում մարզի 12 համայնքներում կատարված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքներով արձանագրված թերություններն ու խախտումները քննարկվել են մարզպետարանում, առաջարկվել է համայնքների ղեկավարներին ավագանու նիստերում քննարկվել արձանագրված թերությունների և խախտումների վերաբերյալ հարցը, մշակել կոնկրետ միջոցառումներ նշված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ, մարվել են կուտակված աշխատավարձի և սոց. վճարների պարտքերը:

2011թ. ընթացքում մարզի 16 կազմակերպություններում կատարվել է ներքին աուդիտի աշխատանքներ :

Համայնքների բյուջեների կատարման վերլուծություն / 2008-2010թթ./

• Սեփական եկամուտներ են հավաքագրվել

- 2009թ-ին 325989.7 հազ. դրամ, կատարվել է 100.3%-ով
- 2010թ-ին 329316.8 հազ. դրամ, կատարվել է 96.7%-ով
- 2011թ-ին 348715.2 հազ. դրամ, կատարվել է 100.9%-ով

2010թ. համեմատությամբ սեփական եկամուտներն աճել են 106 %-ով

• Ընդամենը տարեկան բյուջեներին ամրագրվող եկամուտները հավաքագրվել են

- 2009թ-ին 100.5 %
- 2010թ-ին 99%
- 2011թ-ին 100.0 %

• Մարզի համայնքներին ամրագրվող ընդամենը եկամուտները կազմել են՝

- 2009թ-ին 1263353.2 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1270027.5 հազ.դրամ, կատարվել է 100.5%-ով:
- 2010թ-ին 1187370.8 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1176065.1 հազ.դրամ, կատարվել է 99%-ով:
- 2011թ-ին 1161042.3 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1162985.6 հազ.դրամ, կատարվել է 100.2 %-ով:

Տարեսկզբի դրությամբ աշխատավարձի և սոց.վճարների նախորդ տարիների կուտակված պարտքերը կազմել են ընդամենը 5676.5 հազ. դրամ, որից աշխատավարձ՝ 5676.5 հազ. դրամ, սոց.վճարներ 0 դրամ, մարվել է ընդամենը 5676.5 հազ. դրամ, որից աշխատավարձ 5676.5 հազ., հազ. դրամ: 2011թ.ընթացքում ընթացիկ պարտքեր չեն կուտակվել:

• **Հողի հարկի և գույքահարկի գծով ապառքներ են հավաքագրվել**

- 2009թ-ին 73325.2հազ.դրամ
- 2010թ-ին 44923.6հազ.դրամ
- 2011թ-ին 34230.9հազ.դրամ

□Հողի հարկի արտոնությունների տրամադրելու մասին□ ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում 2011-ին մարզի 44 համայնքներում 442 մարդ օգտվել է այդ օրենքի արտոնություններից, արտոնված տույժերի և տուգանքների գումարը կազմում է՝ 4947.2 հազ. դրամ, որի արդյունքում հավաքագրվել է 8684.0հազ. դրամ հողի հարկի ապառք, գույքահարկի ապառք՝ 9895.93 հազ. դրամ:

- Հաշվետու ժամանակաշրջանում կենսաթոշակ է հաշվարկվել և վճարվել մարզի կենսաթոշակառուներին 3370958.2 հազ.դրամ
- Նպաստառու ընտանիքներին հաշվարկվել և վճարվել է 565642.5,0 հազ.դրամ ընտանեկան նպաստ:
- 2011թ. ընթացքում պետական պատվերի շրջանակներում կատարվել է 498500.0 հազ.դրամի բժշկական ծառայություններ, որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 485500հազ.դրամ, կամ ֆինանսավորվել է 97.4 %-ով:

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՑՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

ՄԱՍԻՆ

Ցուցանիշներ			վայր ց ձող	
Համայնքի սեփական եկամուտները	Մարզի միջինը /%/		2009թ.	100.3%
			2010թ.	96.7%
			2011թ.	100.9%
	Հավաքագրումը նվազել է	Համայնքների թիվը	2010թ,2009թ նկատմամբ	3
			2011թ 2010թ նկատմամբ	3
վարձավճարն երի հավաքագրում	2011թ		83.9	
	2010թ		82.1	
	2009թ		66.5	
Իսմելու ջրի վարձավճարների հավաքագրում մյն.դրամ	2011թ		164.3	
	2010թ		153.99	
	2009թ		139.8	
Հողօգտագործում	Համայնքի վարչական սահմաններում /հա/	Ընդամենը /հա/		
		տրվել է վարձակ.	2010թ	4900.2
			2011թ	5884
		գանձվել է %	2010թ	94.8
			2011թ	154.6
		Համայնքի վարչական սահմաններից դուրս /հա/	Ընդամենը /հա/	
	տրվել է վարձակ.		2010թ	0
			2011թ	0
	գանձվել է %		2010թ	0
		2011թ	0	
Ի օգ տ եմ	Շահագործող կազմակերպությունների		2010թ	12

	թիվը		2011թ	12				
	որից	ունեն հողհատկացում	2010թ	12				
			2010թ	12				
		ունեն լիցենզիա	2010թ	12				
			2011թ	12				
Համատիրութիւններ	ընդամենը ձևավորված		2010թ	0				
			2011թ	0				
	գործող		2010թ	0				
			2011թ	0				
Առողջապահություն	պետ.պատ.շրջանակ. տրվել է /մլն.դրամ/		2010թ	410,0				
			2011թ	485.5				
	մատուցվել է վճարովի բուժ.ծառայություն		2010թ	37				
			2011թ	43.8				
	բուժ.հիմնարկներում փոփոխված ղեկավարների թիվը		2010թ	0				
			2011թ	0				
	մանկավարժական կադրերի պահանջարկը /սահմանամերձ գյուղական բնակավայրերում/		2010թ	0				
			2011թ	2				
	փոփոխվ.դպր. տնօրենների թիվը		2010թ	2				
			2011թ	9				
Կրթություն	հատկացվել է /մլն.դրամ/		2011թ	0				
Սոցիալական ոլորտ	Վարձատրվող հասարակական աշխատանք		իրացվել է /մլն.դրամ/		2011թ	0		
					ծրագրերի թիվը		2011թ	0
			մասնակցել է /մարդ/				2011թ	0
	Գործազուրկների թիվը		Ընդամենը		2010թ	1000		
					2011թ	809		
			գյուղական բնակավայրերում				2010թ	139
							2011թ	118,

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի

քննազավառ

Հանրային իրազեկումը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կարևորագույն բաղադրիչն է: Այն Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2011 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեությունը լուսաբանվել է մարզպետարանի ինտերնետային կայքի, մարզային և հանրապետական ՁԼՄ-ների միջոցով:

Մարզպետարանի իրականացրած ծրագրերը, մասնավորապես քաղաքաշինության, առողջապահության, ճանապարհաշինության, կրթության, գյուղատնտեսության և սոցիալական ոլորտներում կատարած աշխատանքները, համայնքներում ենթակառուցվածքների վերականգնման, համայնքների բյուջեների կատարողականների ընթացքը լուսաբանվել են մարզային <Ազրո Կամուրջ> <Վարդաձոր> ամսաթերթում, ըստ անհրաժեշտության դրանց մասին տեղեկատվություն է հրապարակվել նաև “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթում:

«Վայոց ձորի մարզպետ Սերգեյ Բագրատյանի 2011թ. վեցամսյա գործունեության ընթացիկ հաշվետվության մասին լուսաբանում է եղել “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթում <Սոցիալական հիմնախնդիրները ուշադրության կենտրոնում> վերնագրով (23.07.2011թ), իսկ գործունեության տարեկան հաշվետվության մասին լուսաբանում եղել է նույն օրաթերթի 27.12.2011թ. համարում, <Վայոց ձորի մարզպետն ամփոփեց տարին> վերնագրով:

2011թվականի դեկտեմբերի 29-ին <Պոստ Սկրիպտում> մամուլի ակումբում կայացել է

մարզպետ Սերգեյ Բագրատյանի մամուլի ասուլիսը:

Հանրապետական թերթերում տպագրվել են մարզի կենսագործունեության տարբեր ոլորտներին վերաբերող նյութեր, որոնցում բարձրացված հարցերի ու խնդիրների վերաբերյալ եղել են արագ արձագանքումներ:

2011թ. Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում (vdzor.gov.am) առկա է մարզպետի գործունեության ծրագիրը, որը տեղադրված է կայքի <Ծրագրեր> բաժնի <Մարզպետարանի աշխատանքային ծրագիր> ենթաբաժնում հետևյալ վերտառությամբ՝ <Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2011-2014

թվականների սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի իրականացման 2011 թվականի տարեկան աշխատանքային պլան>:

«Վայոց ձորի մարզխորհրդի նիստերը լուսաբանվել են «Վ տարածքային կառավարման նախարարության կողմից կազմված մեթոդաբանության համաձայն:

2011 թվականին տեղի է ունեցել մարզխորհրդի 4 նիստ, 4 նիստերն էլ լուսաբանվել են:

2011 թ. 1-ին նիստը

- կայացել է մարտի 10-ին,
- լուսաբանվել է մարտի 11-ին՝ նյութը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.region.am) «Նորություններ» ենթաբաժնում,
- կայանալիք մարզխորհրդի նիստի օրակարգի, ժամի և վայրի մասին հայտարարությունը մարտի 1-ին տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.region.am) «Նորություններ» բաժնում:

2-րդ նիստը

- կայացել է հունիսի 24-ին,
- լուսաբանվել է հունիսի 24-ին՝ նյութը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.region.am) «Նորություններ» բաժնում,
- կայանալիք մարզխորհրդի նիստի օրակարգի, ժամի և վայրի մասին հայտարարությունը հունիսի 15-ին տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.region.am) «Նորություններ» բաժնում:

3-րդ նիստը

- կայացել է հուլիսի 22-ին,
- լուսաբանվել է հուլիսի 22-ին՝ նյութը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.region.am) «Նորություններ» բաժնում,
- նիստի մասին արձանագրությունը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական նոր կայքի՝ (vdzor.gov.am) «Մարզպետարան» բաժնի «Մարզխորհրդի նիստեր» ենթաբաժնում:

4-րդ նիստը

- կայացել է նոյեմբերի 21-ին,
- լուսաբանվել է նոյեմբերի 21-ին՝ նյութը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.gov.am) «Նորություններ» բաժնում,
- կայանալիք մարզխորհրդի նիստի օրակարգի, ժամի և վայրի մասին հայտարարությունը նոյեմբերի 15-ին տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.gov.am) «Նորություններ» բաժնում,
- նիստի մասին արձանագրությունը տեղադրվել է մարզպետարանի պաշտոնական կայքի՝ (vdzor.gov.am) «Մարզպետարան» բաժնի «Մարզխորհրդի նիստեր» ենթաբաժնում:

Նիստերի կայացման և դրանց օրակարգի մասին տեղեկացվել են մարզային ՁԼՄ ներկայացուցիչները, ովքեր մասնակցել են նիստերին եւ իրենց լրատվամիջոցներում նույնպես լուսաբանել են մարզխորհրդի աշխատանքները:

2011 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումները մինչև 01.08.2011թ. տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական (vdzor.region.am) կայքի <Ծրագրեր, Որոշումներ, Իրավական ակտեր> բաժնի <Մարզպետի որոշումներ> և <Համայնքների ավագանիների որոշումներ> ենթաբաժիններում, իսկ 01.08.2011թ-ից հետո մարզպետի կողմից ընդունված որոշումները և մարզի բոլոր համայնքների ավագանիների որոշումները համապատասխանաբար տեղադրվել են (vdzor.gov.am) կայքի <Իրավական ակտեր> բաժնի <Մարզպետի որոշումներ> և <Համայնքների > բաժնի <Համայնքների ավագանու որոշումներ> ենթաբաժիններում:

Մարզպետարանի պաշտոնական կայք-էջի <Նորություններ> բաժնում մշտապես տեղադրվում են իրադարձային լուրերը, օրվա հանդիպումների, ընդունելությունների, խորհրդակցությունների, մարզում տեղի ունեցող միջոցառումների, պաշտոնական այցերի մասին տեղեկատվություն:

Մարզի բոլոր համայնքներում առկա են ցուցատախտակներ:

Համայնքներում առկա ցուցատախտակներին հիմնականում տեղադրվում են համայնքի ղեկավարի որոշումները, ավագանու նիստերի օրակարգերը, կայացրած որոշումները:

2011թվականին տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը տեխնիկապես հագեցված է եղել ֆաքսով, հեռուստացույցով, ֆոտո եւ տեսանկարահանող սարքավորումներով:

2011թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նորացվել և հնարավորինս հագեցվել է մարզպետարանի (vdzor.gov.am) պաշտոնական կայքը:

Իրավաբանական բաժին

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և Վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմադրվ իրավական ակտերի պահանջների կատարումը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաբանական բաժնի կողմից իրականացվել է համայնքների կողմից մարզպետարան ներկայացված ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների օրինականության ստուգում, որի արդյունքում հայրնաբերված

խախտումները ուղղելու և թերությունները վերացնելու նպատակով պաշտոնական գրությամբ վերադարձվել է 19 համայնքների ավագանիների կողմից ընդունված 25 որոշում, և 6 համայնքների ղեկավարների կողմից ընդունված 11 որոշում: Բոլոր որոշումներում սահմանված կարգով կատարվել են փոփոխություններ և լրացումներ և ներկայացվել են մարզպետարան:

Օրենսդրական դաշտի և օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրարկումն ապահովելու նպատակով պարբերաբար տրամադրվել է խորհրդատվություն՝ մարզի համայնքների ղեկավարների և ավագանու որոշումների, մարզային ենթակայության հիմնարկների և ընկերությունների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹-րդ հոդվածի հիման վրա ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի փետրվարի 23-ի թիվ 34-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրին համապատասխան վարչական հսկողություն է իրականացվել Հերիեր, Խնձորուտ, Սերս, Սալի, Հորս, Թառաթումբ, Եղեգիս և Հորբատեղ համայնքներում, որին մասնակցել է նաև իրավաբանական բաժինը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների կողմից նախապատրաստված Մարզպետի որոշումների և կարգադրությունների նախագծերի ուսումնասիրություն և տրվել են ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխանության վերաբերյալ եզրակացություններ:

Մարզխորհրդի նիստերում ներկայացվել են ՀՀ օրենքներում, ՀՀ Նախագահի հրամանագրերում, ՀՀ կառավարության որոշումներում և այլ իրավական ակտերում կատարված փոփոխությունները և դրանցից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները:

Իր գործունեության ընթացքում իրավաբանական բաժինն ուսումնասիրել և պատասխանել է համայնքների բնակիչների կողմից Մարզպետին ուղղված

Քարտուղարություն

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և Վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2011թ. մարզպետի կողմից ընդունվել են 117 որոշումներ, 113

կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են հրամաններ, հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ:

2011թ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 3828 և ելք են արվել 5964 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների հետ:

2011թ. ընթացքում մարզպետարանում առաջացել է քաղաքացիական ծառայության 6 թափուր պաշտոններ, որից 1- ի հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր/ աշխատակազմի ղեկավար/,կայացել է մեկ մրցույթ, որից հետո հաղթողը նշանակվել է առաջարար քաղ ծառայության պաշտոնի, երկու կրտսեր քաղ.ծառայողներ նշանակվել են հավաստագիր ունեցող անձանցից՝մնացող պաշտոնները կհամալրվեն մրցույթային եղանակով:

2011թ. հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երում մասնագիտական վերապատրաստում են անցել 16 քաղաքացիական ծառայողներ: “Քաղաքացիական ծառայության մասին” ՀՀ օրենքին համապատասխան ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում և մարզպետարանում արեստավորվել են 11 քաղաքացիական ծառայողներ:

Մարզմետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների ընդունմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը, քննարկմանը և պատասխանին:2011թ-ին մարզպետի մոտ 1194 քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվել:

Տարվա ընթացքում ստացվել են 1589 դիմումներ, որից՝61-ը ստացվել են Ջերմուկի, 469-ը Վայքի, 1059-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2011թ ընթացքում 782 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 42 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր,իսկ 84-ը պեպպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական,կենցաղային,գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Ստացված 1589 դիմումներից դրական լուծում են ստացել 1314-ը, անհիմն լինելու և մեր իրավասություններից դուրս լինելու պարճառաբանությամբ մերժվել են 201-ը, 74դիմումների լուծումը ընթացքի մեջ է:

2011թ. ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1589 քաղաքացիներ, որից՝

1. Դրամական օգնություն 782	
2. Նպաստի հարցերով	110
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	134
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	68
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	63
6. Աշխատանքի տեղավորման	77
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	99
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	91
9. Պետ.պատվերով բուժօգնություն	84
10. Որդեգրման հարցերով	5
11. Երեխաներին ներառական կրթության մեջ ընդգրկելու	21
12. Խնամակալություն և հոգեբարձություն սահմանելու խնդրանքով	55

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ